ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

05.11.2014թ.
229-ի 5

Մեղրի համայնքի ղեկավար
պարոն Արշավիր Հովհաննիսյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հովհաննիսյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Մեղրի համայնքի ղեկավարի 2014թ.-ի 1-ին կիսամյակի գործուղումների ցանկը եւ յուրաքանչյուր գործուղման համար համայնքային բյուջեից ծախսված գումարի չափը,
2. 2014թ.-ի 1-ին կիսամյակում Մեղրի քաղաքում ասֆալտապատման աշխանքների համար համայնքային բյուջեից ծախսված գումարի հաշվետվությունը,
3. Մեղրի քաղաքում ասֆալտապատման աշխանքների իրականացման համար հայտարարված մրցույթի մասնակիցների տվյալներն ու մրցույթի քաղվածքը:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան